պաշտօնը, զոր կը մերժէ, վասն զի Պրուսացիք գրած էին Նալեան պտրք.ի թէ՝ զի Ղազար կաթողիկոսն ձեռնադրեալ էր զնա եպիսկոպոս Պրուսայու. ճիշտ այս միջոցին հրաւէր կ'ստանայ Սիմէոն կթղ.էն Ս. Էջմիածին գնալու և իր հետ տանելու Գասպար ամիրա Մուրատեանը և Յարութիւն ամիրան. որ ուխտաւորութեամբ Ս. Յակոբի վանքը կը գտնուէին (Դիւան. Գիրք Գ. էջ 751)։ Յակոբ կթղ. Շամախեցիին տեղ կաթողիկոսական ընտրելի էր թէև, բայց չի յաջողեցաւ (Զամչ. Գ. 871). Կ. Պոլսի պտրք. կ'ընտրուի Նալեանի առաջարկովը, բայց կը հրաժարի ու կ'ըսէ. ես զիմ անփական թեւիս եւ վիճակիս զանկ ծեր պատուան ձեր քոյոր պատրիարքութեան չեմ փոխանակեր· զի ըստ որում ընդ այս վիճակ եմ սրակեալ յառաջագոյն (Յպգպ. էջ 91—94)։ Կ'ուզէորի Հռովմ և Վենետիկ (1772—75). կը կարգուի ձեռնադրիչ եպս. Հռովմի (1774—80). կը վերադառնայ Հռովմէն և կը կարգուի քարոզիչ Խասգիւղի եկեղեցիին (1780—86) ուր կը վախճանի. իր տապանագիրն է հետեւեալը. «Այս է տապան հանգստեան Սամուէլ վրդ.ի և Արքեպս.ի առաջնորդի վիճակին Պրուսայի. որ գոլով ութսուն ամաց հանգեաւ ի Քրիստոս ի թուականին հայոց ՌՄԼԵ (=1786)։ (Երեւակ. 1859. էջ 232—234. Սարաֆ. էջ 262—174)։ Սամուէլ եպս. յօրինած է 1780ին Կրթութիւն մտաւորական, Զերմեռանդութիւն աղօթից, և Կրթութիւն հօրանց խորհրդոց աշխատութիւնները (Լոյս. 1905. էջ 967)։ Իր ընդօրինակութիւնն է Լուծումն հինգ ձայնից ի Դաւթայ եւայլն խորագրով ձեռագիրը (ՄՁ. Թ. 407)։

ՍԱՄՈՒԷԼ ՎՐԴ.— Մբ. 1824ին, հրաւիրակ ուխտաւորներու։

ՍԱՄՈՒԷԼ ՎՐԴ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ, ՍՂԵՐԴՅԻ.— Մբ. Ծ. 1852ին. Զռ. 1883ին. ՏԴ. (1885—88). ՏՅՊ. 1889ին. ՏՓ. (1891—93). ՏՅ. (1893—95). ՏՀ. (1895—1905). Բ. անգամ ՏՀ. (1911—1916), կը վախճանի 6 Յուլիս 1916ին։

ՍԱՄՈՒԷԼ ՎՐԴ. ՊՈԼՍԵՑԻ.— Մբ. Զռ. 1807ին. Նւ. Թոգատի 1821ին. Նւ. Հնդկաց (1832—34). կը վախճանի Կալկաթայի մէջ և կը թաղուի տեղւոյն Ս. Նազարէթ եկեղեցիին գաւիթը 1834ին. ի նպաստ Ս. Աթոռոյ տպարանին կը կտակէ 150,000 ղրշ. և կտակակատար կը կարգէ Կարապետ Յակոբեան